



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 30 » Նոյեմբեր 2016թ.

N 98/ԼՐ

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 115/Մ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի սեպտեմբերի 16-ի «ԼՂՀ պետական հանրակրթական, արհեստագործական և արտադարոցական (մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, արվեստի, երաժշտական և մարզական դպրոցներ) ուսումնական հաստատություններում մանկավարժի ուսումնական ծանրաբեռնվածության մասին» կարգը հաստատելու մասին» N 115/Մ հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը ներկայացնել ԼՂՀ շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության և սպորտի բաժիններին, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությանը և հրապարակել «Լուսարար» թերթում:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կրթության պետական տեսչությանը և ֆինանսատնտեսական բաժնին:

4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրվելու պահից:



**Ս. ԱՄՐԱՆ**

Հավելված

ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի

նախարարի «30» մարտի 2016թ.

N 98/Մ հրամանի

Հավելված

ԼՂՀ կրթության և գիտության նախարարի

«15» սեպտեմբեր 2010թ. N 115/Մ հրամանի

## ԿԱՐԳ

### **ԼՂՀ պետական հանրակրթական, արհեստագործական և արտադպրոցական (մանկապարտեզական սրբեղծագործական կենտրոն, արվեստի, երաժշտական և մարզական դպրոցներ) ուսումնական հաստատություններում մանկավարժի ուսումնական ծանրաբեռնվածության մասին**

1. Ուսումնական տարվա համար մանկավարժի ուսումնական ծանրաբեռնվածությունը սահմանում է ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) տնօրենը՝ հարցը քննարկելով փոխտնօրենի և մեթոդիավորման նախագահի հետ: Որպես կանոն՝ դասաբաշխումը կատարվում է մինչև մանկավարժի արձակուրդ գնալը:

2. Մանկավարժի ուսումնական ծանրաբեռնվածությունը հաստատվում է օգոստոսի 20-30-ը՝ տարիֆավորմամբ: Ուսումնական տարվա ընթացքում տարիֆավորմամբ սահմանված ուսումնական ծանրաբեռնվածության փոփոխություն հաստատության տնօրենության նախաձեռնությամբ չի թույլատրվում՝ բացառությամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների 12-րդ դասարանում դասավանդող ուսուցիչների, որոնց ուսումնական ծանրաբեռնվածության փոփոխությունը պայմանավորված է 12-րդ դասարաններում սովորողների կողմից երկրորդ կիսամյակում ընտրվող առարկաներով, ինչպես նաև ուսումնական տարվա ընթացքում դասարանների կրճատմամբ:

3. Հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատանքի են ընդունվում ԼՂՀ կրթության, գիտության նախարարի 2013 թվականի հունիսի 19-ի «Ուսումնական հաստատության ուսուցչի (դաստիարակի) թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N 138-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 167-Ն հրամանով հաստատված կարգի համաձայն:

Առնվազն երկու անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը չհամալրվելու դեպքում կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից համապատասխան դպրոց ուղեգրված մասնագետը ապահովվում է առնվազն կես դրույք ուսումնական ծանրաբեռնվածությամբ:

4. Հաստատության տնօրենը իրավունք ունի աշխատանքի ընդունել նոր մանկավարժի, եթե տվյալ մասնագիտությամբ արդեն աշխատող մասնագետները ապահովված են առնվազն մեկ դրույքաչափով:

5.Այլ հիմնարկների աշխատակիցները հիմնական աշխատանքից ազատ ժամանակ հաստատություններում մանկավարժական աշխատանք կարող են կատարել ընդհանուր հիմունքներով՝ մինչև կես դրույքաչափ ծանրաբեռնվածության սահմաններում, տվյալ հաստատության աշխատանքային ռեժիմի շրջանակներում:

6.Հաստատության տնօրենը և տնօրենի տեղակալը կարող են ունենալ նաև մինչև 8 դասաժամ, իսկ 0,5 հաստիքային միավորով փոխտնօրենը՝ մինչև 14 դասաժամ շաբաթական ծանրաբեռնվածություն: Գյուղական բնակավայրերի հաստատություններում մասնագետների բացակայության դեպքում պետական կառավարման լիազոր մարմնի թույլտվությամբ վարչական աշխատողը կարող է ունենալ 8 դասաժամից, իսկ 0.5 հաստիքային միավորով փոխտնօրենը՝ 14 դասաժամից ավելի ուսումնական ծանրաբեռնվածություն, բայց ոչ ավել 6 դասաժամից:

Հանրակրթական ուսումնական հաստատության 0,5 հաստիքային միավորով փոխտնօրենը մինչև 14 դասաժամ դասվար աշխատելու դեպքում վարձատրվում է նաև դասվարի պարտականությունների կատարման համար սահմանված լրավճարի չափով:

**Ծանոթություն:**

**Ուսումնական հաստատություններում 0,5 հաստիքային միավորով վարչական աշխատողների մինչև 14 դասաժամ ծանրաբեռնվածությունը սահմանվում է 2016 թվականի սեպտեմբերի 1-ից:**